«ՓԱԽՍՏԱԿԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գ. Ք. ԱՎԱԳՅԱՆ

Այն հարցը, թե ով կարող է դիտվել փախստական, և որն է փախստականի ու միգրանտի միջև տարբերությունը, առ այսօր հայ գիտական գրականության մեջ չի շոշափվել կամ վերլուծության չի ենթարկվել։ Թե՛ գիտական գրականության մեջ և թե՛ առհասարակ մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ տրվող հաղորդումներում հաճախ են հանդիպում «փախստական», «բռնադաղթված», «գաղթական», «վերաբնակիչ», «պանդուխտ», «միգրանտ» հասկացությունների՝ որպես եթե չտարբերակված; կարելի է ասել՝ կամայական գործածության։ Երևի այդպես էլ պետք է լիներ, որովհետև այստեղ, ըստ երևույթին, գործ ունենք այսպես ասած առօրյա մտածողության հետ։ Բայց խստիվ գիտական մոտեցման դեպքում անհրաժեշտ է հստակորեն առանձնացնել նշված հասկացությունները։ Հնարավո՞ր է հավասարության նշան դնել այդ հասկացությունների միջև։ Մեր կարծիքով, կարելի է միայն որոշակի վերապահումով խոսել դրանց նույնականության մասին։ Գաղթական ասելով՝ հասկանում ենք և՛ փախստական, և՛ միգրանտ։ Այսինքն՝ անձ, որը լքում է իր մշտական բնակության վայր համարվող երկիրը՝ կամ իր անձին սպառնացող վտանգի, կամ սոցիալ-տընտեսական պատճառներով։ Այսպես, գաղթական են համարվում 1828—1830 թթ. Արևմտյան Հայաստանի գավառներից (Պարսկաստան, Օսմանյան Կայսրություն) Արևելյան Հայաստան (Ռուսական Կայսրություն) տեղափոխված 130 հազ. հայերը[1]։ Ըստ էության դժվար է միանշանակ ասել, որ նրանց բոլորի կյանքին անմիջական վտանգ էր սպառնում, եթե շարունակեին ապրել իրենց նախկին բնակավայր համարվող երկրում։ Նմանապես գաղթական են համարվում 1915—1921 թթ. ընթացքում Օսմանյան Թուրքիայի իշխանությունների բռնություններից մազապուրծ եղած շուրջ 350 հազ. հայերը և այլ քրիստոնյա ազգերի ներկայացուցիչները[2]։ Եթե առաջին դեպքում գաղթականին կարելի է համարել միգրանտ, ապա երկրորդ դեպքում գաղթական անվանվողը անպայման փախստական է։ Այս փաստերին սոսկ պատմագիտական մոտեցում ցուցաբերելու դեպքում գաղթական կամ փախստական տերմինի գործածությունը դառնում է երկրորդական։ Բայց սոցիոլոգիական մոտեցման դեպքում ի հայտ է գալիս լուրջ հակասություն։ Փախստականը այն անձն է, որը, ըստ ՄԱԿ-ի 1951 թ. համաձայնագրի, «Մինչև 1951 թ. հունվարի մեկը տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով և ռասայի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հայացքների պատկանելության պատճառով, հետապնդման զոհ դառնալու լիովին հիմնավորված մտավախություն ունենալով, գտնվում է իր քաղաքացիական պատկանելության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ երկրի պաշտպանությունից կամ չի ցանկանում օգտվել այդպիսի պաշտպանությունից նման մտավախության հետևանքով կամ, չունենալով որոշակի քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին սովորական բնակության վայրը համարվող երկրից դուրս,

---

1 Культура жизнеобеспечения и этнос, Е., 1983, с. 117. *Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, Ե., 1985, էջ 252։*

2 *Հայ ժողովրդի պատմություն, էջ 330։*

չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այնտեղ՝ այդպիսի մտավախության հետևանքով»[3]։

Իհարկե, այստեղ մենք պետք է հաշվի չառնենք ժամանակային կոնկրետացումները և միայն կանգ կառնենք երևույթի պատճառական հիմքերի մեկնաբանության վրա։ Դրանցից առաջինը՝ «Իրադարձություններ» հասկացությունը, ՄԱԿ-ի փաստաթղթերում մեկնաբանվում է հետևյալ կերպ. «...«իրադարձություններ» բառի ներքո հասկացվում են տարածքային կամ խորը քաղաքական փոփոխություններ, ինչպես նաև սիստեմատիկ, նպատակադրված հետապնդումներ առաջ բերող մեծ կարևորության դեպքեր, որոնք մինչ այդ տեղի ունեցած փոփոխությունների հետևանք են»[4]։ Ընդ որում, ժամանակային կոնկրետացումը էական չէ այն առումով, որ «փախստականը իր երկիրը կարող է լքել տվյալ ժամանակային սահմանից առաջ կամ հետո, պայմանով, որ հետապնդումների մտավախությունը վերաբերի «իրադարձություններին», որոնք կատարվել են նշված ժամանակային սահմանից առաջ կամ այդպիսի իրադարձությունների ավելի ուշացած հետևանք են»[5]։ Ըստ երևույթին, այդպիսի իրադարձություններ կարող են համարվել պետական կառուցվածքի փոփոխությունները, քաղաքացիական պատերազմը, արտաքին ագրեսիան, հեղափոխական շարժումները և այլն։

«Հետապնդման զոհ դառնալու լիովին հիմնավորված մտավախություններ» դարձվածքը սահմանման մեջ կենտրոնականն է իր նշանակությամբ։ «Մտավախություն» բառը ցույց է տալիս անձնավորության ներքին հոգեկան վիճակը, նրա մտածելակերպը, նրա կողմից արտաքին այն երևույթների գնահատման ունակությունը և եղանակը, որոնք ինքը համարում է իր կյանքին կամ ազատությանը սպառնացող վտանգ։ Հասկանալի է, «մտավախություն» բառը ցույց է տալիս հարցի զուտ սուբյեկտիվ կողմը, և ավելի շուտ այն կարելի է համարել հոգեբանական հասկացություն։ Կախված յուրաքանչյուր անձնավորության հոգեկան կերտվածքից, մտավոր կարողությունից և այլն՝ իրականության այս կամ այն երևույթը կարող է մեկնաբանվել տարբեր կերպ։ Մեկը նույն պայմաններում կարող է իրեն համարել հետապնդումների թիրախ, մեկը ուրիշը՝ ոչ։ Ինչպես իրավացիորեն այդ մասին խոսվում է ՄԱԿ-ի փաստաթղթերից մեկում, «Սուբյեկտիվ տարրի գնահատականը անբաժանելի է խնդրարկուի (փախստականի—Գ. Ա.) անձնավորությունից, քանզի տարբեր անհատների հոգեբանական ազդեցությունները միանման պայմաններում կարող են տարբերվել։ ...Մեկը կարող է փախչելու հապճեպ որոշում ընդունել, մեկ ուրիշը կարող է մանրակրկիտ պլանավորել իր մեկնումը»[6]։ Այդ սուբյեկտիվությունը «մեղմացնելու» նպատակով մտցվում է «լիովին հիմնավորված» արտահայտությունը, որը «ենթադրում է, որ շոշափվում է ոչ միայն անձի մտքերի ձևը նրա՝ փախստականի կարգավիճակը որոշելու ժամանակ, այլև այն, որ մտքերի ձևը պետք է ամրապնդվի օբյեկտիվ իրավիճակով»[7]։ Այսինքն՝ «լիովին հիմնավորված մտավախություններ» արտահայտությունը արդեն պարունակում է և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ կողմեր այն հարցի պարզաբանման մասին, թե արդյո՞ք այդ մտավախությունները իրական են, թե՞ դրանք արդյունք են տվյալ անձի հիվանդագին երևակայության։ Հարկ է նշել, որ մեր խնդիրը չէ փախստականի կարգավիճակը որոշելը, այլ այն, թե որքանով է նրա մտքերի

---

3 Конвенция и протокол, касающиеся статуса беженцев, ООН, 1968, гл. 1, ст. 1А 2, с. 12.

4 Управление Верховного Комиссариата ООН по делам беженцев (այսուհետև՝ УВКБ ООН). Руководство по процедурам и критериям определения статуса беженцев, Женева, январь 1992, с. 12.

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 13—14։

7 Նույն տեղում, էջ 13։

ընթացքը կամ իրականության գնահատման, արժեքավորման զուտ անհատական մոտեցումը համընկնում բուն իրականության հետ։ Այլ խոսքով, իրականում տվյալ անձը խտրականության ենթարկվե՞լ, հետապնդվե՞լ է և այն էլ այն աստիճան, որ դա վտանգ սպառնար կամ վտանգ կսպառնա նրա անձին կամ ազատությանը, որի հետևանքով նա դարձել է փախստական։ Անշուշտ, մեր խորին համոզմամբ, գերակշռողն այստեղ սուբյեկտիվ պահն է, քանի որ անձնավորության կողմից աշխարհի ընկալումը միշտ էլ յուրօրինակ է։ Հավանական է նաև, որ տվյալ անձը, ցանկանալով ձեռք բերել փախստականի կարգավիճակ, կարող է միտումնավոր կեղծել իրականության փաստերը, դրանք հարմարեցնել իր շահերին, նպատակներին, ձգտումներին։ Իրականության փաստերի գիտակցական աղավաղման հնարավորության բացառումը, ինչ խոսք, փախստականների կարգավիճակը որոշող կազմակերպությունների հոգսն է, սակայն ճշմարտության բացահայտումը, գիտական հավաստի փաստի իմացությունը սերտորեն կապված են կարգավիճակի որոշման հետ և վերաբերում են նաև սոցիոլոգիական գիտությանը։ Օբյեկտիվ գիտելիքի ստացման գործում այստեղ կարևորվում է տվյալ իրադարձությունների վերաբերյալ փաստական բոլոր նյութերի միավորումը և համադրումը գիտնականի կողմից։

Հետապնդում։ ՄԱԿ-ի 1951 թ. Կոնվենցիայի 33-րդ հոդվածից կարելի է եզրակացնել, որ «ըստ ռասայի, կրոնի, ազգության, քաղաքական հայացքների կամ ինչ-որ սոցիալական խմբերի պատկանելության անձի կյանքին կամ ազատությանը սպառնացող վտանգը համարվում է հետապնդում»[8]։ Այստեղ ևս այլ կարգի ճնշիչ գործողությունները որպես հետապնդումներ դիտելը կապված է սուբյեկտիվ տարրի հետ և կախված է յուրաքանչյուր անհատի հայացքներից, կարծիքներից, զգացմունքներից և այլն։

Հաճախ, որպես հետապնդում կարող է դիտվել խտրականությունը։ Խտրականությունը (ռասայական, կրոնական, ազգային և այլն) որոշակի ճնշողական այս կամ այն խմբերի նկատմամբ։ Երբ այն հասնում է անձի կյանքին ու ազատությանը սպառնացող չափերի, կարող է դիտվել որպես հետապնդում։ Օրինակ, եթե մի երկրում որևէ ազգային փոքրամասնության արգելվում է նշել իր կրոնական ծեսերը, իսկ մյուսներին թույլատրվում է, ապա սա համարվում է ազգային-կրոնական խտրականության դրսևորում, որն արդեն, ըստ նշված հատկանիշների, կարող է համարվել հետապնդում։ Չպետք է, սակայն, «հետապնդում» եզրի՝ այստեղ գործածվող նշանակությունը շփոթել որևէ երկրում օրենսդրությամբ սահմանված կարգով պատժելի արարք կատարած անձին հետապնդելու հետ։ Այս երկրորդ դեպքում հետապնդումը կապված է պատժի հասկացության հետ։ «Փախստականը անարդարության զոհն է, այլ ոչ թե արդարադատությունից խուսափող անձ»[9]։ Բայց այստեղ ևս, ինչպես պարզվում է, կան տարբեր նրբերանգներ։ Օրինակ, հաճախ ոչ թե տվյալ երկրի օրենքը, այլ դրա կիրառման ձևն է խտրական կամ, օրենքի կիրառումից բացի, կա հետապնդման վտանգ[10]։

«Ըստ ռասայական, կրոնական, ազգային հատկանիշի, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական հայացքների պատկանելության» արտահայտությունը, մեր կարծիքով, բավականաչափ պարզ է, ուստի մեկնաբանության հարկ չկա։ Նշենք միայն, որ որևէ ռասայի, ազգության կամ սոցիալական խմբի պատկանելությունը, որևէ կրոն դավանելը ինքնին պատճառ կամ հիմք չեն փախստական դիտվելու։ Իսկ եթե առկա է խտրականություն, ըստ այդ հատկանիշների, կամ անհանդուրժողական կոպիտ վերաբերմունք ընդդիմադիր քաղաքական հայացքներ ունեցողների հանդեպ (հարկ

---

8 УВКБ ООН, с. 17.

9 Նույն տեղում, էջ 19։

10 Նույն տեղում, պար. 57—59։

է տարբերել քաղաքական հանցագործին քաղաքական այլախոհից), առաջնորդվում են մարդու իրավունքների միջազգային պակտի դրույթներով։

«Իրենց քաղաքացիական պատկանելության երկրից դուրս գտնվողներ» արտահայտությունը վերաբերում է քաղաքացիություն ունեցող անձանց։ «Փախստականի կարգավիճակ ստանալու ժամանակ,—ասվում է ՄԱԿ-ի Փախստականների գործերի գերագույն կոմիսարիատի փաստաթղթում,— խնգրարկուն պետք է գտնվի իր քաղաքացիական պատկանելության երկրից դուրս։ Այս կարգից բացառություն չկա»[11]։ Ընդսմին, հետապնդման մտավախությունը պարտադիր չէ, որ տարածվի տվյալ անձի քաղաքացիական պատկանելության երկրի ողջ տարածքի վրա (հոդվ. 91)։

«Եվ որը այդպիսի մտավախությունների հետևանքով չի կարող կամ չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից» արտահայտության մեջ պաշտպանությունից օգտվելու հնարավորության բացակայությունը կախված չէ խնդրարկուից։ Պաշտպանությունից օգտվել «չցանկանալը» բացատրվում է «այդպիսի մտավախությունների հետևանքով» արտահայտությամբ[12], այսինքն, եթե փախստականը ցանկանա օգտվել իր երկրի պաշտպանությունից, ապա նրա ցանկությունը անհամատեղելի է իր երկրից դուրս գտնվելու հետ՝ հետապնդումների զոհ դառնալու լիովին հիմնավորված մտավախությունների հետևանքով։

«Կամ չունենալով որոշակի քաղաքացիություն և, նման իրադարձությունների հետևանքով, գտնվելով իր նախկին սովորական բնակության վայրը համարվող երկրից դուրս, չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այնտեղ այդպիսի մտավախությունների հետևանքով» արտահայտությունը վերաբերում է քաղաքացիություն չունեցող անձանց (ապատրիդներ)։ Եթե քաղաքացիություն ունեցող փախստականների համար գրվում է «քաղաքացիական պատկանելության երկիր», ապա ապատրիդների համար՝ «նրանց վերջին բնակության վայր համարվող երկիր», իսկ «չի կարող օգտվել պաշտպանությունից» դարձվածքը փոխված է «չի կարող վերադառնալ այնտեղ» դարձվածքով։ Եթե քաղաքացիություն չունեցող անձը մի անգամ ճանաչվել է փախստական, ապա հետագայում բնակության երկրի ցանկացած փոփոխություն չի խախտում նրա կարգավիճակը (հոդվ. 105)։

1951 թ. համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարագրաֆի A 2 բաժնով նախատեսված է. «Այն դեպքերում, երբ ինչ-որ անձ մի քանի երկրների քաղաքացի է, «նրա քաղաքացիական պատկանելության երկիր» արտահայտությունը նշանակում է երկրներից յուրաքանչյուրը, որի քաղաքացին է նա համարվում, և այդպիսի անձը չի համարվում իր քաղաքացիական պատկանելության երկրի պաշտպանությունից զրկված, եթե լիովին հիմնավորված մտավախություններից բխող՝ առանց որևէ գործնական պատճառի նա չի դիմում երկրներից որևէ մեկի պաշտպանությանը, որոնց քաղաքացին է նա»[13]։

Այսպիսով, տարբերվում է միջազգային իրավական փաստաթղթերում գործածվող «փախստական» հասկացության բովանդակությունը։ Հարկ է նշել, որ փախստականներն տարբերվում են այսպես կոչված «տեղում փախստականներից»։ Վերջիններս այն անձինք են, որոնք իրենց երկրից հեռանալու պահին չեն եղել փախստական, բայց փախստական են դարձել հետո»[14]։

Մի ժամանակ հարկ է տարբերել փախստականին միգրանտից։ Միգրանտը անձ է, «որը... կամավոր լքում է իր երկիրը, որպեսզի բնակվի այլ վայրում։ Նա կարող է առաջնորդվել փոփոխությունների ցանկությամբ

---

11 Նույն տեղում, էջ 27, հոդվ. 87։

12 Документы ООН, E/ 1618, с. 39.

13 Конвенция и протокол, с. 12.

14 УВКБ ООН, с. 29—30.

կամ արկածներով, ընտանեկան կամ անձնական բնույթի պատճառներով։ Եթե անձը տեղափոխվում է բացառապես տնտեսական պատճառներով, ապա նա տնտեսական միգրանտ է և ոչ թե փախստական»[15]։ Սակայն հաճախ տնտեսական միգրանտը կարող է ճանաչվել որպես փախստական։ Դա այն դեպքն է, երբ տնտեսական քաղաքականությունը տվյալ երկրի բնակչության որոշակի խավերի, շերտերի նկատմամբ վեր է ածվում խտրականության, ինչը ստիպում է մարդկանց թողնել հայրենիքը (այսպիսի վերաբերմունք է դրսևորվել ԼՂԻՄ-ի Նախիջևանի ԻԽՍՀ-ի հայ բնակչության նկատմամբ)։

Պետք է ասել, որ ՄԱԿ-ի փաստաթղթերում փախստական սահմանումը բավական մանրակրկիտ է, այն առաջին հերթին իրավական սահմանում է։ Այստեղ եզրերի բացատրությունը տրվում է այն տեսանկյունից, թե ում կարելի է ճանաչել փախստական, ում՝ ոչ։ Բայց իրականում շատ-շատերը կարող են չդիմել այս կամ այն ատյանին, քանի որ անտեղյակ են օրենքներին կամ չեն ուզում ճանաչվել որպես փախստական։ Այլ կերպ ասած՝ մեզ կարող են բոլորովին էլ չհետաքրքրել փախստականին այդպիսի կարգավիճակ շնորհելու չափանիշներն ու մեթոդները (չնայած գա ինքնին շատ հետաքրքիր է), այլ հատկապես այն, թե տեսականորեն ով պետք է դիտվի որպես այդպիսին։ Այս առումով նախ անհրաժեշտ է փախստականին սահմանազատել միգրանտից։

Ասա որոշ հեղինակների[16], միգրացիայի գործընթաց ասելով հասկացվում է երկրի տարածքով բնակչության տեղաշարժերի ընդհանրությունը, կապված մշտական բնակության վայրը փոխելու հետ։ Մեկ այլ տեղ հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «Միգրացիան... մարդկանց կողմից երկրների, շրջանների, տարբեր տիպի բնակավայրերի միջև կատարվող տեղաշարժերի ընդհանրությունն է»[17]։ Այնուհետև՝ «Այն ընդգրկում է տեղաշարժերի տարբեր տեսակներ. անվերադարձ, սեզոնային, ճոճանակային, էպիզոդիկ»[18]։ Հետևաբար, միգրանտը մարդկային անհատն է, որը կատարում է միգրացիայի ակտը։

Ինչպես երևում է, միգրանտի և փախստականի միջև կան և ընդհանրության եզրեր, և՛ տարբերություններ։ Ընդհանուրն այն է, որ նրանք կատարում են բնակության վայրի փոփոխություններ, ինչը բոլոր դեպքերում կապված է և՛ նյութական ծախսերի հետ, և՛ ինքնին հոգեբանական բարդ գործընթաց է։ Երկու դեպքում էլ անձը կամա թե ակամա ընտրություն է կատարում՝ ուր և ինչպես գնալ։ Էլ ավելի էական են տարբերությունները։ Փախստականը հարկադրված թողնում է իր երկիրը և հրաժարվում նրա պաշտպանությունից, իսկ միգրանտը կարող է մնալ իր երկրի քաղաքացին, եթե անգամ մեկնում է այլ երկիր աշխատելու, բնակվելու և այլն, չնայած հաճախ նա իր երկրի սահմաններից դուրս էլ չի գալիս։ Երկրորդ, փախստականը այդ բանն անում է հարկադրաբար՝ մտավախություն ունենալով ենթարկվել հալածանքների, հետապնդումների, վտանգել կյանքը։ Մինչդեռ, միգրանտը ծայրահեղ դեպքերում միայն ստիպված առժամանակ կարող է մեկնել այլ երկիր՝ իր տնտեսական վիճակը բարելավելու միտումով (տնտեսական միգրանտ), իսկ հիմնականում նրա կամքն ազատ է ընտրություն կատարելիս։

Այժմ՝ «գաղթական», «բռնագաղթած», «պանդուխտ» հասկացությունների մասին։ Կարծում ենք՝ «գաղթական» հասկացությունը ավելի ընդհան-

---

15 Նույն տեղում, էջ 20։

16 Т. И. Заславская и др., Методика выборочного исследования миграции сельского населения, Новосибирск, 1969. с. 8. Տե՛ս նաև В. И. Переведенцев, Миграция населения и трудовые ресурсы Сибири, Новосибирск, 1966.

17 Рабочая книга социолога. М., 1983, с. 81.

18 Նույն տեղում։

ական է, քան «փախստականն» ու «միգրանտը»։ Այն մի դեպքում փախստականն է, մեկ այլ դեպքում՝ միգրանտը։ Բայց երկվությունը որքան հարազատ է առօրյա գիտակցությանը, նույնքան էլ խորթ է գիտությանը, ուստի անհրաժեշտ է հստակություն մտցնել այս հարցում։ Եթե գաղթական ասելով անմիջապես չի նկատվում բռնության, հարկադրանքի հատկանիշը, ապա բռնագաղթած հասկացության մեջ հատկապես շեշտվում է գաղթի սուբյեկտի նկատմամբ բռնության գործադրման փաստը։ Այս իմաստով, թերևս, հարմար է «գաղթական» և «միգրանտ» հասկացությունները դիտել որպես հոմանիշ, նույնիմաստ հասկացություններ, իսկ «բռնագաղթած» տերմինը գործածել փախստական հասկացության իմաստով։ Ավելին՝ գաղթական բառը, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է գործածել, քան միգրանտ բառը։

«Պանդուխտ» բառը ներկայումս ավելի սակավ է գործածվում, բայց քանի որ այն միջին դարերից ի վեր հասկացվում էր հայրենիքից հեռացած, օտար ափերում դեգերող անհատ, ապա որոշ իմաստով այն և՛ փախստականի, և՛ գաղթականի, և՛ տնտեսական միգրանտի նշանակություն է ձեռք բերում։ Պանդուխտը, որպես կանոն, ընտանիքի հայրն էր կամ ավագ որդին, որն իր հայրենիքից հեռանում էր միայնակ, որպեսզի կարողանար աշխատանք գտնել և միջոցներ վաստակել՝ տնտեսական ծանր պայմանները բարելավելու համար։ Սակայն եթե հաշվի առնենք տնտեսական ճընշման դաժան, անմարդկային պայմանները և մեթոդները, ապա կարելի է տվյալ անձին համարել փախստական՝ բառիս այսօրվա հշանակությամբ։

Առանձին ուշադրության է արժանի «ներքին տեղաշարժված անձ» հասկացությունը։ Դրանք «այն անձինք են կամ անձանց խմբերը, որոնք զինված հակամարտությունների, ներքին անկարգությունների, մարդու իրավունքների սիստեմատիկ խախտումների կամ էլ բնական ու մարդու գործունեության հետևանքով առաջ եկած աղետների արդյունքում հարկադրված են եղել լքել իրենց տները կամ սովորական բնակության վայրերը և չեն հատել միջազգայնորեն ճանաչված սահմանը»[19]։ Գրեթե նույն կերպ են բնորոշվում նաև այսպես կոչված «ոչ կամավոր վերաբնակվող անձինք, որոնք հարկադրված են տեղաշարժվել իրենց քաղաքացիության երկրում՝ նրանց կյանքին իրական վտանգ ներկայացնող այնպիսի հանգամանքների բերումով, ինչպիսիք են՝ զինված հակամարտությունները, ներքին անկարգությունները, լարված միջէթնիկական հարաբերությունները կամ մարդու իրավունքների սիստեմատիկ խախտումները, և որոնք իրենց քաղաքացիության երկրներում վերաբնակության ժամանակ օգնության կարիք ունեն»[20]։ Դժվար չէ նկատել, որ այս կատեգորիայի միգրանտների իրական վիճակը ընդհուպ մոտենում է փախստականների վիճակին։ Տարբերությունը միայն այն է, որ փախստականի՝ վերը բերված սահմանումը նշում է անձի կողմից իր երկիրը թողնելու հանգամանքը, մինչդեռ «ներքին տեղաշարժված անձը» մնում է իր երկրում։ Այսինքն, իրական և իրավական կարգավիճակները մի դեպքում համընկնում են, մյուս դեպքում՝ ոչ։

Այսպիսով, գիտական գրականության մեջ կարելի է գործածել փախստական (կամ բռնագաղթած) և գաղթական (միգրանտ) հասկացությունները՝ վերը տրված նշանակությամբ։ Համամիտ լինելով փախստական հասկացության վերոհիշյալ սահմանման հիմնական դրույթներին, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում տալ այդ հասկացության նոր սահմանում, քանի որ վերը բերվածը կրում է նախ և առաջ իրավաբանական, գործ-

---

19 Программа действий, принятая на региональной конференции по рассмотрению вопросов беженцев, недобровольно перемещенных лиц, других форм недобровольных перемещений и возвращающихся лиц в странах СНГ и соответствующих соседних государствах, Женева, май 1996, с. 36.

20 Նույն տեղում, էջ 37։

նական-նորմատիվ բնույթ։ Փախստականը իր երկրից ֆիզիկապես օտարված անձ է, որը հարկադրված է լքել իր երկիրը և ապաստան փնտրել այլ երկրում՝ իր սենեկին և ազատությանը սպառնացող վտանգի կամ իր նկատմամբ կիրառվող ծայրահեղ խտրականության պատճառով։

Այս սահմանումը, անշուշտ, կրում է ընդհանրական բնույթ և նպատակ չունի իրավաբանական կանոնի դեր կատարել։ Այստեղ հատկապես ընդգծվում է բռնության առկայության բուն փաստը և հարկադրված իր երկրից հեռանալու հանգամանքը։ Բոլոր դեպքերում փախստականը բռնության զոհ է։ Իսկ հարկադրանքի տարրը ներառում է նաև բռնության պահը և, որ ավելի կարևոր է, անձի ներքին հոգեբանական ապրումի երևույթը։ Վերջին իմաստով հարկադրանք բառը ցույց է տալիս, որ փախստական դառնալը սոսկ մեքենայական, անձի՝ հոգեկանից կտրված գործընթաց չէ, այլ հոգեկան ստրեսի, ծայրահեղ լարվածության, արտառոց պայմաններում բանական վճիռ կայացնելու և այն իրագործելու ակտ Ընդսմին, այդ ակտը երբեմն կարող է կրել զուտ անհատական, իսկ մեծ մասամբ՝ զանգվածային բնույթ։ Այս առումով պոտենցիալ փախստականը փորձում է ստեղծված իրադրությունից ելք որոնել՝ ա) միայնակ, բ) ընտանիքի հետ, գ) հանդես գալ նույն ճակատագրին դատապարտված որոշակի սոցիալական խմբի կամ մարդկանց մեքենայական ամբողջության (ամբոխի) տարրի դերում։ Եթե առաջին երկու դեպքերում անձը ստիպված է վախի, տագնապի տառապանքը կրել միայնակ կամ իր ընտանիքի հետ, երբ ամեն ինչ կարող է չափազանցվել, որովհետև միայնակության ճնշող զգացումը կարող է անհրևակայելի չափերի հասնել ու յուրօրինակ ելք գտնելու վճռի հանգեցնել (օրինակ, պայքարել մինչև վերջ, զոհվել, բայց չհանձնվել), ապա վերջին դեպքում արդեն ի հայտ են գալիս հոգեբանական բնույթի բոլորովին այլ գործոններ՝ ամենից առաջ միայնակության զգացումի վերացում և նոր՝ նույն ճակատագրի տեր խմբի անդամ լինելու զգացողություն։ Այս և այլ բազմաթիվ նրբերանգների առկայությունը դարձյալ խոսում է հարցի հոգեբանական կողմի կարևորության մասին։

СОДЕРЖАТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ПОНЯТИЯ «БЕЖЕНЕЦ»

Г. Х. АВАКЯН

Резюме

До настоящего времени в научной литературе понятие «беженец» используется, как правило, без учета его полисемантичности, а нередко отождествляется с понятием «мигрант». Между тем, на сегодняшний день имеется, по всеобщему признанию, несколько разновидностей групп переселенцев, придающих миграционному процессу довольно сложный характер. В статье делается попытка дать определение понятия «беженец» с учетом не только правовых признаков (они известны по международным конвенциям), но и признаков социально-психологических, полагая, что достаточно оснований для этого имеется в материалах, касающихся аналогичных явлений в Республике Армения.